ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունիսի 2026թ. թիվ 424-Ա

Զ.ԽԱՆՎԵԼՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1) կետի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 37-րդ և 39-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 1653-Ա հրամանով ձևավորված՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ենթակայությամբ գործող պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի մասնագիտական հանձնաժողովի 2026 թվականի մայիսի 27-ի նիստի թիվ 747 արձանագրությունը և հաշվի առնելով Զ.Խանվելյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Զարուհի Սերգեյի Խանվելյանին 2026 թվականի հունիսի 18-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու Մ. Թանդիլյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ մեկ տարի փորձաշրջանով:

2. Զարուհի Խանվելյանի փորձաշրջանի համակարգող նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի Վ.Թեքեյանի անվան թիվ 6 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Նառա Միկոյանին:

3. Զ.Խանվելյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

4. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու Մ.Թանդիլյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Զարուհի Խանվելյանին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու Մ.Թանդիլյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի գնահատմանը ներկայացնել ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրի 1 տարվա կատարողական հաշվետվությունը:

5. Փորձաշրջանի ղեկավար Նառա Միկոյանին՝ փորձաշրջանի ավարտին՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում գնահատել փորձաշրջանի ընթացքում տնօրենի կատարած աշխատանքները և մասնագիտական հանձնաժողովին ներկայացնել տնօրենի աշխատանքների գնահատման թերթիկը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-06-17 12:34:09 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հունիսի 17
ք.Վանաձոր